CENTERS FOR MEDICARE & MEDICAID SERVICES

Առողջ մնալը

Medicare-ի կանխարգելիչ ծառայությունները

Առողջ մնալու հեշտ և կարևոր միջոցը հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման ծառայություններ ստանալն է: Նրանք կարող են օգնել Ձեզ վաղաժամ հայտնաբերել առողջական խնդիրները, երբ բուժումը լավագույնս արդյունավետ է: Խոսեք Ձեր բժշկի կամ բուժծառայություն մատուցողի հետ՝ պարզելու համար, թե ինչ ստուգումներ կամ այլ ծառայություններ կարող են Ձեզ անհրաժեշտ լինել, և որքան հաճախ պետք է դրանք ստանաք առողջ մնալու համար: Եթե Դուք ունեք Medicare Մաս B, Դուք ստանում եք բազմաթիվ կանխարգելիչ ծառայություններ՝ Ձեզ համար անվճար:

Ինչ եք Դուք վճարելու

Եթե Դուք ունեք Medicare Մաս B, Դուք ոչինչ չեք վճարի բազմաթիվ կանխարգելիչ ծառայությունների համար, եթե դրանք ստանաք որակավորված բժշկից կամ այլ առողջապահական ծառայություններ մատուցողից, ով ընդունում է հանձնարարականը: Հանձնարարականը Ձեր բժիշկի, ծառայություն տրամադրողի կամ մատակարարի համաձայնությունն է՝ վճարվելու անմիջականորեն Medicare-ի կողմից, ստանալու այն գումարը, որ հաստատում է Medicare-ը ծառայությունների համար և չպահանջելու Ձեզանից գումար ավելին քան Medicare –ից՝ չհատուցվող գումարն է կամ համապահովագրությունը: Եթե Դուք ունեք Medicare-ի առողջապահական պլան, որոշ պլաններ կարող են չգանձել պահումներ, համավճարներ կամ համապահովագրություն որոշակի ներցանցային, Medicare-ի կողմից ապահովագրված կանխարգելիչ ծառայությունների համար: Անմիջապես կապվեք Ձեր պլանի կամ նպաստների ադմինիստրատորի հետ՝ Ձեր ծախսերի մասին ավելին իմանալու համար: Medicare-ի առողջապահական պլանների մասին ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար այցելեք Medicare.gov/sign-up-change-plans/different-types-of-medicare-health-plans:

Medicare-ը ծածկում է այս կանխարգելիչ ծառայությունները՝

Որովայնային աորտայի անևրիզմի զննում

Մեկանգամյա ուլտրաձայնային զննում ռիսկային համարվող անձանց համար: Եթե Դուք որովայնային աորտայի անևրիզմայի ընտանեկան պատմություն ունեք, կամ 65-75 տարեկան տղամարդ եք և Ձեր կյանքի ընթացքում ծխել եք առնվազն 100 սիգարետ, Դուք համարվում եք ռիսկային խմբի մեջ:

Medicare-ը հատուցում է այս կանխարգելիչ ծառայությունները՝ (շարունակություն)

Ալկոհոլի չարաշահման զննում և խորհրդատվություն

Medicare-ն ընդգրկում է տարեկան ալկոհոլի չարաշահման մեկ զննում մեծահասակների համար (ներառյալ հղի կանանց)՝ բացահայտելու նրանց, ովքեր չարաշահում են ալկոհոլը, բայց ալկոհոլից կախվածություն չունեն: Եթե Ձեր զննման արդյունքները դրական են, ապա տարեկան կտրվածքով Դուք կարող եք իրավասու լինել չորս կարճատև խորհրդատվական հանդիպումների (եթե Դուք ունակ և զգոն եք խորհրդատվության ընթացքում): Ձեր առաջնային խնամքի բժիշկը կամ առաջնային խնամքի ծառայության այլ տրամադրողը պետք է Ձեզ խորհրդատվություն տա առաջնային խնամքի միջավայրում (օրինակ՝ բժշկի գրասենյակում):

Ոսկրային զանգվածի գնահատում

Այս ստուգումներն օգնում են որոշել, թե արդյոք Ձեզ սպառնում է ոսկրերի կոտրվածք: Medicare-ը հատուցում է այս ստուգումները 24 ամիսը մեկ (ավելի հաճախ, եթե կա բժշկական ցուցում)՝ օստեոպորոզի ռիսկի տակ գտնվող որոշակի մարդկանց համար:

Սրտանոթային վարքային թերապիա

Medicare-ը կփոխհատուցի տարեկան մեկ այցելություն Ձեր առաջնային խնամքի բժշկի կամ այլ առաջնային խնամք տրամադրողի մոտ՝ օգնելու նվազեցնել սրտանոթային հիվանդության ռիսկը: Այդ այցելության ընթացքում Ձեր բժիշկը կարող է քննարկել ասպիրինի օգտագործումը (անհրաժեշտության դեպքում), ստուգել Ձեր արյան ճնշումը և առաջարկել Ձեզ առողջ սնվելու համար հնարքներ:

Սրտանոթային հիվանդությունների զննում

Այս զննումները ստուգում են Ձեր խոլեստերինի, լիպիդների և տրիգլիցերիդների մակարդակը՝ պարզելու համար, թե արդյոք Դուք սրտի կաթվածի կամ ինսուլտի ռիսկի տակ եք: Medicare-ն հատուցում է սիրտ-անոթային հիվանդությունների զննումը 5 տարին մեկ անգամ:

Արգանդի վզիկի և հեշտոցի քաղցկեղի զննում

Medicare-ը ծածկում է ՊԱՊ թեստերը և կոնքի հետազոտությունները՝ արգանդի վզիկի և հեշտոցի քաղցկեղի առկայությունը ստուգելու համար: Medicare ունեցող բոլոր կանայք կարող են անցնել այս թեստերն ու հետազոտությունները 24 ամիսը մեկ անգամ, իսկ բարձր ռիսկի տակ գտնվող կանայք կարող են դրանք անցնել 12 ամիսը մեկ անգամ: Medicare-ը նաև հատուցում է մարդու պապիլոմավիրուսի (HPV) թեստերը (երբ տրվում է ՊԱՊ թեստով) 5 տարին մեկ անգամ, եթե Դուք 30-65 տարեկան եք և չունեք HPV-ի ախտանիշներ:

Կոլոռեկտալ քաղցկեղի զննում

Այս ստուգումներն օգնում են կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերմանը, երբ բուժումն առավել արդյունավետ է: Եթե Դուք 45 տարեկան եք կամ ավելի բարձր, կամ գտնվում եք կոլոռեկտալ քաղցկեղի բարձր ռիսկի տակ, Medicare-ը հատուցում է այս սկրինինգային թեստերից մեկը կամ մի քանիսը՝ կղանքում թաքնված արյան թեստ, արյան միջոցով բիոմարկերի թեստ, ճկուն սիգմոիդոսկոպիա, սքրինինգային կոլոնոսկոպիա, բարիումի կլիզմա և կղանքի բազմաթիրախային ԴՆԹ թեստ (օր.՝ Cologuard™): Որքան հաճախ է Medicare-ը վճարում այս թեստերի համար, կախված է թեստից և կոլոռեկտալ քաղցկեղի ռիսկի մակարդակից: Դուք և Ձեր բժիշկն եք որոշում, թե որ ստուգումն է Ձեզ համար ամենաարդյունավետը:

Ծխախոտի օգտագործման և ծխախոտի հետևանքով առաջացած հիվանդությունների կանխարգելման խորհրդատվություն

Medicare-ը ծածկում է ծխելու և ծխախոտի օգտագործումը դադարեցնելու խորհրդատվությունը ծխախոտ օգտագործող մարդկանց համար: Ծխախոտ օգտագործելու դեպքում 12-ամսյա կտրվածքով կարող եք ստանալ մինչև 8 խորհրդատվություն:

Դեպրեսիայի (ընկճախտի) զննում

Medicare-ը մեկ տարվա ընթացքում հատուցում է դեպրեսիայի ուղղությամբ մեկ զննում Medicare ծրագրից օգտվող բոլոր անձանց համար: Դուք պետք է զննումն անցնեք առաջնային խնամքի տրամադրման վայրում (օրինակ՝ բժշկի գրասենյակում), որտեղ անհրաժեշտության դեպքում կարող եք ստանալ հետագա բուժում և ուղեգրումներ:

Դիաբետի (շաքարախտի) զննում

Medicare-ը հատուցում է արյան սքրինինգային թեստերը՝ դիաբետի կամ նախադիաբետային վիճակի առկայությունը ստուգելու համար: Դուք կարող եք անցնել այս թեստերը, եթե Դուք համարվում եք դիաբետի ռիսկի տակ, եթե գեր եք, կամ եթե ունեք արյան բարձր ճնշում, խոլեստերինի և տրիգլիցերիդների նորմայի սահմաններից դուրս մակարդակի պատմություն (դիսլիպիդեմիա) կամ արյան բարձր շաքարի պատմություն: Medicare-ը նաև հատուցում է այս թեստերը, եթե Դուք համապատասխանում եք այս չափանիշներից 2-ին կամ ավելիին՝ 65 և ավելի բարձր տարիքի, ավելորդ քաշ, շաքարային դիաբետի ընտանեկան պատմություն (ծնողներ, եղբայրներ, քույրեր), գեստացիոն դիաբետի պատմություն (դիաբետ հղիության ընթացքում), կամ Դուք ծննդաբերել եք ավելի քան 9 ֆունտ կշռող երեխա: Ձեր թեստի արդյունքների հիման վրա Դուք կարող եք իրավասու լինել տարեկան մինչև 2 զննման:

Դիաբետի ինքնակառավարման ուսուցում

Այս դասընթացը սովորեցնում է Ձեզ, թե ինչպես հաղթահարել և կառավարել Ձեր շաքարախտը: Ձեր ուսուցումը կարող է ընդգրկել խորհուրդներ առողջ սնվելու, ակտիվ լինելու, արյան շաքարը վերահսկելու, դեղորայք ընդունելու և ռիսկերը նվազեցնելու վերաբերյալ: Medicare-ը հատուցում է այս ուսուցումը, եթե Դուք ունեք դիաբետ և գրավոր հրահանգ եք ստանում Ձեր բժշկից կամ այլ առողջապահական ծառայություններ մատուցողից:

Գրիպի դեմ պատվաստումներ

Այս պատվաստումներն օգնում են կանխարգելել հարբուխը կամ գրիպի վիրուսը: Medicare-ը հատուցում է այս պատվաստումները յուրաքանչյուր գրիպի սեզոնի համար մեկ անգամ:

Գլաուկոմայի թեստեր

Այս թեստերը օգնում են ստուգել աչքի գլաուկոմա հիվանդության առկայությունը: Medicare-ը հատուցում է այս ստուգումների հետ կապված ծախսերը յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ գլաուկոմայի բարձր ռիսկային խմբում գտնվող անձանց համար:

Հեպատիտ Բ-ի դեմ պատվաստումներ

Ներարկումների այս շարքը պաշտպանում է մարդկանց Հեպատիտ Բ-ով վարակվելուց: Medicare-ը հատուցում է այս ներարկումները Հեպատիտ Բ-ով վարակվելու միջին կամ բարձր ռիսկ ունեցող մարդկանց համար:

Medicare-ը հատուցում է այս կանխարգելիչ ծառայությունները՝ (շարունակություն)

Հեպատիտ B վիրուսի (HBV) վարակի զննում

Medicare-ը հատուցում է HBV վարակի զննումները HBV վարակի բարձր ռիսկ ունեցող մարդկանց և հղի կանանց մոտ: Medicare-ը կփոխհատուցի այս զննումները միայն այն դեպքում, եթե առաջնային խնամք տրամադրողը նշանակի դրանք: Medicare-ը տարեկան հատուցում է HBV վարակի զննումները շարունակական բարձր ռիսկ ունեցողների համար, ովքեր չեն պատվաստվում հեպատիտ B-ի դեմ: Medicare-ը նաև հատուցում է այս զննումները հղիների համար յուրաքանչյուր հղիության համար առաջին նախածննդյան այցի ժամանակ, ծննդաբերության ժամանակ նոր կամ շարունակական ռիսկի գործոններ ունեցողների համար և ապագա հղիությունների առաջին նախածննդյան այցի ժամանակ (նույնիսկ եթե Դուք նախկինում ստացել եք հեպատիտ B-ի պատվաստում կամ ունեցել եք բացասական HBV սքրինինգի արդյունքներ):

Հեպատիտ C-ի սքրինինգային թեստեր

Medicare-ը հատուցում է հեպատիտ C-ի մեկանգամյա սքրինինգային թեստը 1945-ից 1965 թվականներին ծնված մարդկանց համար: Medicare-ը նաև հատուցում է տարեկան զննումները բարձր ռիսկի տակ գտնվող որոշ մարդկանց համար, ներառյալ նրանց, ովքեր օգտագործում կամ օգտագործել են ապօրինի ներարկվող դեղամիջոցներ կամ արյան փոխներարկում են կատարել մինչև 1992 թվականը:

ՄԻԱՎ-ի զննում

Medicare-ը հատուցում է ՄԻԱՎ-ի (մարդու իմունային անբավարարության վիրուսի) զննումները, եթե Դուք 15-65 տարեկան եք և վտանգի տակ չեք, կամ 15 տարեկանից փոքր կամ 65 տարեկանից մեծ եք և բարձր ռիսկի տակ եք: Medicare-ը հատուցում է այս թեստը 12 ամիսը մեկ անգամ կամ հղիության ընթացքում մինչև 3 անգամ:

Թոքերի քաղցկեղի զննում

Medicare-ը հատուցում է թոքերի քաղցկեղի զննումը ճառագայթման ցածր չափաբաժիններով համակարգչային տոմոգրաֆիայի միջոցով տարին մեկ անգամ, եթե Դուք համապատասխանում եք այս բոլոր թարմացված պայմաններին. Դուք 50–77 տարեկան եք, չունեք թոքերի քաղցկեղի նշաններ կամ ախտանիշներ (ասիմպտոմատիկ), ծխող եք կամ թողել եք ծխելը վերջին 15 տարվա ընթացքում, ունեք ծխախոտ ծխելու առնվազն 20 «տուփ-տարվա» պատմություն (միջինը մեկ տուփ (20 ծխախոտ) օրական 20 տարվա ընթացքում), և Դուք ունեք Ձեր բժշկի հրահանգը: Նախքան թոքերի քաղցկեղի առաջին զննումը, Դուք պետք է հանդիպում նշանակեք Ձեր բժշկի հետ՝ քննարկելու օգուտներն ու ռիսկերը և որոշելու, թե արդյոք զննումը ճիշտ է Ձեզ համար:

Մամոգրաֆիա (կրծքագեղձի քաղցկեղի զննում)

Medicare-ը փոխհատուցում է մամոգրաֆիան 12 ամիսը մեկ անգամ 40 և ավելի բարձր տարիքի կանանց համար: Medicare-ը նաև ընդգրկում է մեկ բազային մամոգրաֆիա 35-39 տարեկան կանանց համար:

Medicare-ի դիաբետի կանխարգելման ծրագիր

Եթե Դուք նախադիաբետային վիճակում եք և համապատասխանում եք այլ չափանիշներին, Medicare-ը հատուցում է կյանքի ընթացքում մեկ անգամ ապացուցված առողջական վարքագծի փոփոխության ծրագիր, որը կօգնի Ձեզ կանխել 2-րդ տիպի դիաբետը: Ծրագիրը սկսվում է շաբաթական հիմնական սեանսներով, որոնք առաջարկվում են խմբային եղանակով 6 ամսվա ընթացքում: Հիմնական սեանսներից հետո Դուք կստանաք ամսական 6 հաջորդական սեանսներ, որոնք կօգնեն Ձեզ պահպանել առողջ սովորությունները:

Բժշկական սնուցման թերապիայի ծառայություններ

Medicare-ը կարող է հատուցել բժշկական սնուցման թերապիան և որոշակի հարակից ծառայություններ, եթե ունեք դիաբետ կամ երիկամների հիվանդություն, կամ եթե Դուք երիկամի փոխպատվաստում եք կատարել վերջին 36 ամիսների ընթացքում: Բժիշկը պետք է ուղեգրի Ձեզ ծառայություն(ներ) ստանալու համար:

Գիրության վարքային թերապիա

Եթե Ձեր մարմնի զանգվածի ինդեքսը 30 կամ ավելի է, Medicare-ը հատուցում է վարքային թերապիայի դասերի ծախսերը՝ Ձեզ քաշ կորցնելու հարցում օգնելու համար: Medicare-ը հատուցում է այս խորհրդատվությունը, եթե Ձեր առաջնային խնամքի բժիշկը կամ առաջնային խնամքի ծառայության այլ տրամադրողը խորհրդատվություն է տալիս առաջնային խնամքի միջավայրում (օրինակ՝ բժշկի գրասենյակում), որտեղ նրանք կարող են համակարգել Ձեր անհատականացված կանխարգելման ծրագիրը Ձեր մյուս բուժխնամքի հետ:

Պնևմակոկային պատվաստումներ

Medicare-ը հատուցում է պնևմոկոկային պատվաստումները (կամ պատվաստանյութերը), որոնք կօգնեն կանխել պնևմակոկային վարակները (օրինակ՝ թոքաբորբի որոշ տեսակներ): Դուք կարող եք ստանալ պնևմակոկի դեմ պատվաստանյութի մինչև 3 դեղաչափ՝ կախված որոշակի չափանիշներից: Խոսեք Ձեր բժշկի կամ այլ բուժծառայություն տրամադրողի հետ՝ պարզելու համար, թե որ պատվաստանյութը Դուք պետք է ստանաք:

Կանխարգելիչ այցեր

Մեկանգամյա «Բարի գալուստ Medicare» կանխարգելիչ այց. Medicare-ը հատուցում է Ձեր առողջության հետ կապված Ձեր բժշկական և սոցիալական պատմության վերանայումը, ինչպես նաև կանխարգելիչ ծառայությունների վերաբերյալ կրթությունն ու խորհրդատվությունը (օրինակ՝ զննումներ, պատվաստումներ և ուղղորդումներ՝ ձեզ անհրաժեշտ այլ խնամքի համար): Medicare-ը հատուցում է այս այցը Medicare Մաս Բ ունենալու առաջին 12 ամիսների ընթացքում:

Տարեկան «Առողջության» այց. Եթե Դուք ունեցել եք Մաս Բ-ն ավելի քան 12 ամիս, կարող եք տարեկան «Առողջության» այց կատարել՝ մշակելու կամ թարմացնելու Ձեր անհատականացված ծրագիրը, որը կօգնի կանխարգելել հիվանդությունները և հաշմանդամությունը՝ հիմնված Ձեր ընթացիկ առողջության և ռիսկի գործոնների վրա: Medicare-ը հատուցում է այս այցը յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ: «Առողջության» տարեկան այցը ֆիզիկական հետազոտություն չէ:

Medicare-ը հատուցում է այս կանխարգելիչ ծառայությունները՝ (շարունակություն)

Շագանակագեղձի քաղցկեղի զննում

Այս զննումները ստուգում են շագանակագեղձի քաղցկեղը: Medicare-ը հատուցում է ուղիղ աղիքի թվային հետազոտություն և շագանակագեղձի հատուկ հակագենի (PSA) արյան թեստ 12 ամիսը մեկ անգամ 50-ից բարձր տարիքի տղամարդկանց համար (սկսած Ձեր 50-ամյակի հաջորդ օրվանից):

Սեռական ճանապարհով փոխանցվող վարակների զննում և խորհրդատվություն

Medicare-ը հատուցում է սեռական ճանապարհով փոխանցվող վարակների զննումը քլամիդիայի, գոնորեայի, սիֆիլիսի և հեպատիտ B-ի համար: Medicare-ը հատուցում է այս զննումները հղի կանանց և որոշ մարդկանց համար, ովքեր ունեն սեռական ճանապարհով փոխանցվող վարակի բարձր ռիսկ: Ձեր առաջնային խնամքի բժիշկը կամ առաջնային խնամքի ծառայության այլ տրամադրողը պետք է նշանակի զննում կամ ուղղորդի Ձեզ վարքագծային խորհրդատվության: Medicare-ը հատուցում է այս զննումները յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ կամ հղիության որոշակի ժամանակահատվածներում: Medicare-ը նաև հատուցում է մինչև 2 վարքագծային խորհրդատվության սեանս ամեն տարի: Medicare-ը միայն կհատուցի Medicare-ին իրավասու առաջնային խնամքի ծառայություն մատուցողների կողմից առաջնային խնամքի միջավայրում (օրինակ՝ բժշկի գրասենյակ) անցկացված խորհրդատվական սեանսները: Medicare-ը չի հատուցի խորհրդատվությունը որպես կանխարգելիչ ծառայություն ստացիոնար պայմաններում (օրինակ՝ բուժքույրական ծառայության մատուցման հաստատությունում):

Լրացուցիչ տեղեկատվության համար

Medicare-ի կողմից այս կանխարգելիչ ծառայությունների ապահովագրական ծածկույթի մասին լրացուցիչ մանրամասների համար, ներառյալ Original Medicare-ում Ձեր ծախսերը, այցելեք Medicare.gov/publications «Medicare-ի կանխարգելիչ ծառայությունների ձեր ուղեցույցը» գրքույկը դիտելու կամ տպելու համար Կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) և խնդրեք պատճենը: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարին:

Դուք կարող եք նաև մուտք գործել (կամ ստեղծել) Ձեր ապահով Medicare օգտահաշիվը Medicare.gov կայքէջում, որտեղ կարող եք տեսնել կանխարգելիչ ծառայությունների ցանկը, որոնք Դուք իրավասու եք ստանալ Original Medicare-ով: Ձեր օգտահաշվի միջոցով Դուք կարող եք նաև ստանալ Medicare-ի այլ անձնական տեղեկատվություն, դիտել Ձեր Medicare-ի հայցերը, տպել Ձեր պաշտոնական Medicare քարտի պատճենը, վճարել Ձեր Medicare-ի հավելավճարները, եթե հաշիվ եք ստանում Medicare-ից և այլն:

Նշումներ

Դուք իրավունք ունեք ստանալ Medicare-ի վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի ձևաչափով, օրինակ՝ խոշոր տպված, բրայլյան կամ աուդիո տարբերակով: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ խտրականության եք ենթարկվել: Հավելյալ տեղեկատվության համար այցելեք Medicare.gov/about-us/nondiscrimination/accessibility-nondiscrimination.html, կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1 -800-633-4227): TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարին:

This product was produced at U.S. taxpayer expense.

CMS Product No. 11100-AR (Armenian)
March 2023